ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17 մարտի 2020թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Համբարձում Նավասարդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Կարապետ Քարտաշյան, Հայկ Հովհաննիսյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/13» ծածկագրով ընթացակարգի N 1չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման և գնման ընթացակարգի ամփոփման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/13» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 06.03.2020թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2020 թվականի մարտի 13-ին, Ժամը՝ 12:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար ձեռքբերման նպատակով՝ Քարտրիջի (պլաստիկ քարտ տպող) գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/13» ծածկագրով ընթացակարգի 13 մարտի ժամը՝ 12:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N 1 չափաբաժնի մասով նիստը կասեցնել և «Միկրորինգ» ՍՊԸ-ին և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ N 1 չափաբաժնի մասով «Միկրորինգ» ՍՊԸ-ն և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել էին բավարար:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/13» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի ունեցավ 17.03.2020 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց 63 հասցեում և քանի որ նիստին ներկա չէին «Միկրորինգ» ՍՊԸ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, ուստի գների նվազեցման շուրջ բանակցությունները տեղի չի ունեցել և մասնակիցների գնային առաջարկները մնացել են անփոփոխ:

1.4 Հաշվի առնելով վերոգրյալը հանձաժողով որոշեց՝

ա) «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/13» ծածկագրով N 1 չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել «Միկրորինգ» ՍՊԸ-ին, քանի որ իր գնային առաջարկն ամենացածրն է և չի գերազանցում այդ գնումը կատարելու համար պատասխանատու ստորաբաժման կողմից գնման հայտով ներկայացված նախահաշվային գինը:

բ) Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

գ) «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Նավասարդյան

Քարտուղար՝ ---------- Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ

1 ---------- Կ. Քարտաշյան

2 ---------- Հ. Հովհաննիսյան